ռոճիկի դիմաց տրվող այլ հողային եկամուտներով։ Որքան ավելանում էր զինվորականության թիվը, համապատասխան չափով պետք է ընդարձակվեին նաև պետական հողային ֆոնդերը։

Գահ բարձրանալով՝ Սուլթան Մուհամմադ Խուդաբանդան (1578—1587) սկսեց կըզըլբաշ էմիրներին համապատասխան օլքաներ բաժանել։ Սակայն, երկրում գոյություն ունեցող օլքաների մեծ մասը արդեն բաժանված էր, իսկ մի մասն էլ գրավված թուրքերի կողմից. այդ պատճառով էլ շատ էմիրների օլքաներ չհասան, և իրենց ռոճիկները նրանք կանխիկ դրամով ստանում էին պետական գանձարանից։ Ըստ Իսքանդար Մունշու, այս հանգամանքը առիթ է տալիս նոր խռովությունների և գժտությունների կըզըլբաշ էմիրների միջև[2]։ Զինվորականությունը նախընտրում էր կանխիկ գումարի փոխարեն ստանալ թիուլներ կամ հանձնարարություններ՝ այս կամ այն հարկատու համայնքի վրա, որպեսզի կարողանար մի քանի անգամ բազմապատկել ստանալիք գումարը։ Զինվորականության այդ ձգտումը բացատրվում էր նաև այն բանով, որ շատ հաճախ ստանալով ցմահ որևէ հարկատու օբյեկտի բոլոր հարկերը գանձելու իրավունքը, նրանք փաստորեն դառնում էին տվյալ գյուղի կամ գյուղերի տերն ու տնօրենը և կաշառքով ու զանազան խարդախ միջոցներով սեփականացնում դրանք։ Ահա թե ինչու «թիուլ» կամ «համեսալե» ստացողները ամեն կերպ աշխատում էին ձեռք բերել այնպիսի օբյեկտներ, որոնք մոտ էին իրենց հիմնական բնակավայրին։ Թե ինչպես էր կատարվում ռոճիկների դիմաց տարբեր հարկային օբյեկտներից, այդ թվում նաև դիվանի գյուղերից, մեծ մասամբ բնամթերքով գանձվող հարկերի բաշխումը զինվորականության միջև, կարելի է պատկերացնել Իսքանդար Մունշու հետևյալ նկարագրությունից. «Շարունակ նորին գերազանցության (Շահ Աբբաս Ա.— Հ. Փ.) մտահոգության առարկան այն էր, որ թե՛ հաղթական զինվորները, թե՛ նորին սրբության ասպանդակին ծառայողները, նույնիսկ արքունի գործատների վարպետներն ու աշկերտները որոշյալ վայրից ստացվող ամենամյա ռոճիկներ ունենան, որ ամեն տարի այդ վայրից ստանալով շարունակեն ծառայություն մատուցել և այդպիսով ազատվեն դաֆթար կամ դիվան գնալ-գալուց և ռոճիկի գումար կամ օրապահիկ պահանջելուց։ Ուստի, կարգադրեց որպեսզի զորքերի ամբողջ պահանջը վճարվի ամենականխիկ (վճարունակ) վայրերից։ Այս գործը նա հանձնարարեց մեծապատիվ է՛ թեմադ-ուդ-դովլե, բարձրագույն դիվանի վեզիր Միրզա Աբութալիբին... որպեսզի արքունի դաֆթարխանեի քարտուղարների հետ միասին այդ ամեռ (1617—1618) մնան Թավրիզում և յուրաքանչյուր անձի կամ խմբի բաժինը ճշտեն և այնպիսի վայրերից նշանակեն, որոնք հարմար կլինեն տվյալ անձնավորության համար, ի նկատի ունենան նրանց բնակավայրերի հեռավորությունն ու մոտիկությունը, հաշվի առնեն ռոճիկ ստացողի ցանկությունը և ապա յուրաքանչյուրի բարաթը, որի մեջ պետք չ շեշտված լինի «համեսալե» (ամենամյա) բառը, առանձին-առանձին տան նրանց ձեռքը։

Մեծապատիվ է՛ թամադ-ուդ-դովլեն և բարձրաստիճան մուսթովֆիները համաձայն սույն բարձր հրամանի մինչև տարվա վերջը, որ չորս ամիս է լինում (1617 դեկտեմբեր— 1618 մարտ), մնացին Թավրիզում և այս գործը հանձնարարված ձևով ավարտեցին։ Տողերիս գրողն էլ, արքունի դաֆթարխա-

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 228։